

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՃԿԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԵՐՄԱՆ ԻՄԵՐԻՔ-ԿԱՐԱԳԵՑՁԵԱՆԻ

(Վ. Ե Ր Զ¹)

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ուրեմն մեզ հեղաքրքրող հարցերը սոքա են. ա. արդեօք Հիւ-
ֆսթունդը ձգտում է շաւանափոխ անել հայ որբիկներին և բ.
ձգտում է արդեօք գերմանացնել նոցա:

Անցեալ համարում մենք արինք նիւթեր այս հարցերին պա-
րասխանելու համար. հիմնւելով նոցա վրայ և առհասարակ այս
հարցերի վերաբերեալ բոլոր նիւթերի վրայ, որոնք ամբողջութեամբ
բերել ի հարկէ անկարելի է², կարծում ենք, որ սխալ է հարեալ
եզրակացութիւնը:

¹ Տես Մուրճ 1899 թ. № 11—12, 1900 թ. № 1, 2, 3.

² Հեղաքրքրողի համար կ'ըբերենք գլխաւոր աղբիւրները. «Mitthei-
lungen aus d. Orient». 1899 № 4, էջ 27, № 5, էջ 34. № 9, էջ 73-74.
«Das Reich Christi» 1898. ապրիլ, յօդած «Deutsche Interessen im O-
rient», էջ 102. Նոյն թերթում, 1899, չուլիս, յօդած «Innere Missions-
kräfte». — Aus der Arbeit des armen. Hilfswerks» թերթում, 1898, նո-
յեմբեր, էջ 173. 1899 ապրիլ, էջ 43, սեպտեմբեր, էջ 128. Յերոյ անհրա-
ժեշտ է չիչել «Christliche Welt» թերթից բրոշիւրով արտագրած պ. Ռոր-
թալի շահեկան յօդածը «Was müssen wir bei der Arbeit für die Arme-

Այն ժամանակ, երբ Հիլֆսբուրնը սկսում էր փոքր առ փոքր կազմել, նորա ձգտումները և գործունէութիւնը լոկ մարդասիրական էին—սովեալներին հաց բաժանել, կանանց և որբերին ապաստան տալ, աւերած զիւղերում փոշ, շորեղէն, սերմ բաժանել. ահա ինչու մն էր կայանում նոր սրեղծած ընկերութեան գործունէութիւնը: Նոյն իսկ այն ժամանակ, այսինքն 1896 թ. հրատարակած թուուցիկ և այլ թերթերը լոկ այդ մարդասիրական ոգովն են ներշնչւած: Այս մարդասիրական ձգտումներին ժամանակի ընթացքում միացան նախ կրօնական ձգտումներ և յետոյ՝ բարդարացումս քաղաքական րեսակէտից (ոչ քաղաքական շահեր). ուրիմն Հիլֆսբուրնի ձգտումների զարգացումը կարելի է այսպէս ներկայացնել.

1. մարդասիրական 2 } մարդասիրական, 3 { մարդասիրական
կրօնական } կրօնական } կրօնական
քաղաքական } քաղաքական
(արդարացում)

Սկսենք մարդասիրական ձգտումներից: Շատ մեծ սխալ կ'լինէր ասել թէ անկարելի բան է, որ Հիլֆսբուրնը ունենայ կամ ունենար լոկ մարդասիրական նորաբաններ առանց այս կամ այն եսական շահերի խառնուրդի: Մենք, հայերս, ինչպէս ուրիշ փոքր ազգերը ամեն կողմից շահագործւած լինելով, մրննելով ամեն մի նոր լարարերութեան մէջ օպորտների հետ, ախամայ a priori սկսում ենք կասկածել, չ'լինի այս անգամ էլ կամենում են մեզ խաբել,

nier berücksichtigen?) (==«Գործելով չօգուտ հալերի մենք ինչ պիտի ի նկատի ունենանք»): Յօշուածագիրը մտնանիշ է անում հաւոց նկեղեցու վերանորոգման ներքին և արտաքին շտաբութիւնների վրայ: Վերջապէս պատոր Բրոկէսի (Broekes) փոքրիկ չօղածը—«Die gregorianische Kirche und das Evangelium» տպած պատոր Լոմանի կրօնական թերթերից մէկում—«Der Freiwillige», (==կամաւորը) 1899. № 10, և նորերումս երևան եկած որսոմական րեսակէտից Դր. Լեպսիուսի շատ շահեկան չօղածը, նորա նոր ամսաթերթում «Der Chrisliche Orient». 1900 լոնււար-փետրուար: Կարելի է յիշել և թուուցիկ թերթը 1897 թ. «Deutsche Orient Mission», որը լոկ է սիւսում այն հարցի վրայ, թէ ինչ կապ ունի «հայերին օժանդակելու գործը» գերմանական արեւելեան միսսիոնի ընդհանուր ձգտումների հետ:

շահագործել: Timeo Danaos et dona ferentes, մտածում ենք մենք: Բացի այդ, մենք, ինչպես և ամեն մի փոքր ազգ, ունենալով անթիւ սեփական ցաւեր, չենք կարող ըմբռնել, թէ ինչպէս կարելի է, որ գտնւին մարդիկ, որոնք ամբողջ իրենց կեանքը նւիրեն այնպիսի մի ետազուրկ գործի ինչպիսին է մի օտար և անյայտ ազգի օգնութիւնը: Չպիտի մոռանալ որ իր սեփական ազգին ու հայրենիքին ծառայելու անհրաժեշտութիւնը, որպէս բարոյական պարտք, չի զգացում մեծ ազգերի մէջ այնքան ուժեղ կերպով, ինչպէս փոքր ազգերի մէջ: Վերջինների համար ամեն մի անհատի թէ ֆիզիկական և թէ կուլտուրական կորուստը շատ զգալի է. և նա, ով նւիրում է մի օտարի գործի, նկատում է գրեթէ ինչպէս Դասալիք: Եւրոպական կեանքը ընթանում է համեմատաբար այնպիսի բնական կերպով, նա ունի այնքան հսկողներ և պատասխանատուներ, որ շատ բնական է, որ գտնւում են այստեղ մի քանի մարդիկ, որոնք մի օտար բայց անհամեմատ անբախտ ազգութեան փառապանքների փալաւորութեան տակ, մի մեծ գործ են սկսում, որի նպատակն է այդ ազգին փոքր ինչ օգնել. բնական է նոյնպէս, որ յիսուն միլիոնաւոր ազգի մէջ գտնւեցան հազարներ, որոնք պատրաստ եղան նիւթապէս օգնելու այդ գործին: Ուրեմն Հիլֆբուենդի օգնութեան գործը չպիտի անպատճառ կեղծաւոր, շահագործական լինի. կարելի է միայն կասկածել և կասկածելով հարկաւոր է փորձել, a posteriori սպացուցանել այդ. և մենք կարող ենք ասել, որ Հիլֆբուենդի գործունէութեան ուսումնասիրումը և հէնց այն հանդամանքը, որ նորա ծախսած գումարից մեծ մասը գնացել է ոչ թէ որբանոցների ուսումնարանների, այլ անմիջական օգնութեան վրայ (հացի, սերմի, շորեղէնի և գործիքների վրայ), ցոյց է տալիս, որ լոկ մարդասիրական ձգտումները, Հիլֆբուենդի ուրիշ ձգտումների թւի մէջ, սկզբից մինչև այսօր միշտ մեծ դեր են խաղացել:

Ճիշտ է, կայ մի հանգամանք, որը ակամայ կարող է a priori կասկածանքների տեղի տալ: Ինչն է եղել սրտմառը, որ մարդասիրութեան խօսուն գործը սկսեցին և փանում են հոգեւորականները, այլ ոչ թէ աշխարհականները: Պատահական է այդ երեւոյթը, թէ չէ: Ոչ, պատահական չէ, և այդ ունի իւր պատճառները, որ կարելի է բացատրել:

Մինչև հայկական կոտորածները 1894—96 թ. գերմանացիք գրեթէ չգիտէին ինչ է «Armenier» (հայ) խօսքը, արդէն չեմ ասում որ ոչ ոք գաղափար չունէր թէ ուր են ապրում հայերը: Կոտորածների ժամանակ, երբ գերման հասարակութիւնը լրագրական հեռագիրների շնորհիւ շեռ նոր էր սկսում ծանօթանալ հայերի հետ, գերման հոգեւորականները արդէն բաւականի բան գիտէին հայերի մասին: Զպէտք է մոռանալ որ գերման ժողովրդի քաղաքական ուշադրութիւնը միշտ դրաւ ծէ է եղել ներքին, գերմանական հարցերով, գերմանական իշխանութիւնների ջարաբերութիւններով: Երբ այդ անկախ պետութիւնները, Եւրոպայի օրերով, կազմեցին մի ընդհանուր մարմին, կայսրութիւն, այն ժամանակ ժողովուրդը, հոգեբանօրէն ու քաղաքականօրէն շատ բնական կերպով, սկսեց հետաքրքրուել նա և արտաքին քաղաքականութեան հարցերով: Սակայն այդ արտաքին հարցերը շեռ կրում էին զուտ եւրոպական բնաւորութիւն, և այն լայն-համաշխարհային քաղաքականութիւնը, որը այժմ Վիլհելմ II այնպիսի ջաջութեամբ փանում է, երկար պատմութիւն չունի, գուցէ միայն երկու փասնեակ փարիններ: Մի ժողովրդի համար դա շատ քիչ է, և հասկանալի է, որ գերման հասարակութիւնը ոչ միայն հայերի, այլ առհասարակ Եւրոպայից դուրս բնակուող ազգերի մասին շատ թերի փեղկկութիւններ ունի: Այս կէտում հոգեւորականները աւելի շատ գիտեն քան թէ հասարակ աշխարհական քաղաքացիք: Թէ շնորհիւ եկեղեցական պատմութեան, որը ամեն մի հոգեւորական ուսումնասիրել է, և թէ ներկայիս Արևելքում փեղի ունեցող կրօնական մրցման շնորհիւ, հայերի ինչ լինելը նոցա փոքն ի շատէ պիտի ծանօթ լինէր: Ամբողջ բողոքը, որ բարձրացրին գերմանացոց պատրոնները կոտորածների դէմ, շեշտում էր այն գլխաւոր հանգամանքով, որ «կոտորած են քրիստոնեաներ»: Վարկի է հաստատ ասել, որ եթէ հայերը քրիստոնեայ չ'լինէին, այն բողոքը, այն ժողովները, որոնք փեղի ունեցան կոտորածների ժամանակ հայերի օգտին, (արդարութիւնը պահանջում է աւելացնել—և միայն շնորհիւ գերման պատրոնների) —ամենեւին զոյութիւն չէին ունենալու:

Գալով կրօնական շահերին, պիտի նկատենք, որ այն ինչ որ ամենք այսօրեղ «շահեր» ենք անւանում, չեն կարող «շահեր» ասել

այն մութով, ինչպէս այդ հասկացուում է, երբ ասում ենք «կաթո-
լիկական շահեր», «բաշաքական շահեր» և այլն: Ձեմ կարծում, որ
բողոքական եկեղեցին կարողանայ ունենալ որ և է շահեր, որով-
հետև նա կազմակերպւած մի մարմին է, որը ունենար իր սեփա-
կան քաղաքական կեանքը, ինչպէս, օրինակ, կաթոլիկ եկեղեցին,
որի ներկայացուցիչները ամեն տեղ պաշտպանում են իրենց հին
բները և պատրաստում նորերը յանուն կաթոլիկ եկեղեցու, որպէս
կազմակերպութեան: Բողոքականութիւնը անհարական է: Բողոքա-
կան եկեղեցու միասնականները, լինեն նոքա ամերկացիք, թէ գեր-
մանացիք, նւիրում են իրենց գործին, հետեւելով լոկ անձնական
հակումներին, սեփական հաւարին և համոզմունքներին: Բնաւ զար-
մանալի է, եթէ գերմանացի բողոքական պատրոնների մէջ գըրմ-
ւում են ոմանք, որոնք, խիստ համոզւած լինելով իրենց դաւանու-
թեան անաբարձր լինելուն, ձգտել են փարածելու այդ դաւանու-
թեան սկզբունքները ոչ-բողոքական ժողովուրդների մէջ՝ քրիստո-
նէական և ոչ-քրիստոնէական:

Սակայն այդ քարոզը մի եկեղեցական մարմնի ծրագրի իրա-
գործումը չէ, այլ կրկնում եմ, հետեւանք անձնական ձգտումնե-
րի: Գերմանական, կամ ամերիկական միասնականները, այդ քարո-
զով ելք են փալիս իրենց կրօնական ոգևորութեան, անձնական
ձգտումին, այն է եղբայրական ծառայութիւն մատուցանել այդ ծա-
ռայութեան ամենակարօտներին: Նոքա ծառայում են իրենց իշխանե-
րին: Այդ իշխանները կարելի է քննադատութեան ենթարկել, բայց
իշխանները նոցա սեփական իշխաններն են, և նոքա ծառայում են
նրանց անկեղծօրէն, և միայն նոցա, այլ ոչ թէ իրենց երկրի քա-
ղաքական կամ ուրիշ շահերին: Բողոքական քարոզը կարող է միև-
նոյն ժամանակ շատ նպաստիչ հանդիսանալ, օրինակ, Գերմանիայի
պետական արևելեան ծրագրներին, բայց բողոքական միասնակա-
նները (կարող են լինել իհարկ է բացառութիւններ) զիտակցօրէն
իրենց գործունէութիւնը չեն յարմարեցնում այդ ծրագրին: Այդ-
պէս չէ կաթոլիկների միջև: Ճիշտ է, սոքա էլ շատ քիչ են հետա-
քրքրւում քաղաքական հարցերով, բայց հէնց այն պարտաւորով որ
ունին մի ընդհանուր և միակ հայրենիք—կաթոլիկ եկեղեցու ա-
հաւոր կազմակերպութիւնը իր մայր աթոռով—Վարիկանը: Յանուն

այդ քահանայական կազմակերպութեան հազարաւոր կաթոլիկ միսսիոնարներ³ կամայ և յաճախ ականայ, այսինքն առանց ներքին կոչման, աշխարհիս բոլոր կէտերում պապական քարոզ են անում 4:

Աւերարանականութեան և կաթոլիկութեան դրդիչ հանգամանքների գանազանութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ արտայայտում է ոչ թէ միայն նոցա նպատակների և հետեանքների այլ և քարոզի ձևերի վրայ:

Ովքեր են, օրինակ, Հիլֆսբուրնդի գործիչները: Մարտիկ, որոնք, կրկնում ենք, ոգևորած են երկու գաղափարով—տարածել մաքուր կրօնը (բողոքականութիւնը) և «մաքուրել» քրիստոնէական գործերով: Հայ ընթերցողի մէջ, այս խօսքերը կասկածանքի և հեգնութեան ժպիտ կարող են յառաջ բերել: Նորա համար անհաւատալի է, որ գտնուում են Եւրոպայում լուրջ մարտիկ, որոնք կարող են յափշտակել այդպիսի ձգտումներով. այստեղ անպատճառ պիտի մի յետին նպատակ լինի:

Բայց զիտեանալու է մի բան — և հարկաւոր է շորս վրայ մտանանիշ անել, ոչ թէ Հիլֆսբուրնդը արդարացնելու նպատակով, այլ որպէս զի Հիլֆսբուրնդի երևան դալը մեզ համար որքան հնար է, բազմակողմանի հասկանալի դարձնելու համար, — որ մեզ, հայերիս անհասկանալի են մի շարք ձգտումներ, որոնք սովորական երևոյթ են ուրիշ և մանաւանդ եւրոպական ազգերի մէջ: Յայտնի է, որ մենք, հայերս, ոչ անգիպակցաբար, ոչ էլ գիպակցաբար շատ կրօնասէր

³ Մի նշանաւոր Ֆրանսիական հեղինակ, (ինչպէս երևում է չափազանց մոլեռանդ կաթոլիկ) հաւատացնում է, որ կաթոլիկ միսսիոնարները Արևելքում անձնէր են իրենց գործին, իսկ բողոքականները սարսափելի ետամու: Այս համեմատութիւնը դժար ընդունելի է, որովհետեւ անկասկած նոքա, (այսինքն բողոքականները), որոնք նւիրում են մի գործի, հետեւելով անձնական կոչման և որոշ գաղափարի, պէտք որ աւելի անձնէր լինին, քան թէ «պաշտօնական» միսսիոնարները — կաթոլիկները: Այդ կայելի է ընդունել միաջն ալն մտքով, որ կաթոլիկները աւելի մեծ անձնական զոհեր են բերում իրենց պատլին, քան թէ բողոքականները, որոնց զոհաբերութիւնների սեղանը — իրենց սեփական համոզումն քննեն են: (La France du Levant, par Etienne Lamy. Revue des Deux Mondes 15 սեպտեմբեր 1899. էջ 925 — 26).

չենք: Կրօնական հեղափոխութիւնը պակտում է մեզ⁴: Գիտակցական հաւատ, այսինքն հաւատ, որը հիմնւած է՝ ոչ թէ միայն ըզզացմունքների այլ և մի ամբողջ փիլիսոփայական հայեցողութեան վրայ, մենք չունինք Իսկ նայեցէք Եւրոպայում: այստեղ, թէ կաթոլիկութիւնը և թէ բողոքականութիւնը ունին իրենց անթիւ փիլիսոփայական սիստեմները, որոնք անդադար երևան են գալիս՝ իսկզբանէ մինչև այսօր ձգտելով մրցել յարական փիլիսոփայութեան հետ. և այն անաւոր ճիգը, որը յրել է յարական, գիտնական փիլիսոփայութիւնը կրօնական սիստեմները ցրտալիւս համար, արդէն ապացուցանում են, որքան ուժեղ են այս սիստեմները. քրիստոնէական շարքի մեծ փիլիսոփաները, թէիսպաները թէ աթէիսպաները, մատերիալիստները թէ սպիրիտուալիստները, զբաղւել են ամենալուրջ կերպով ոչ թէ միայն կրօնական, այլ և շաւանական հարցերով: Կաթոլիկ և բողոքական պրոֆեսսոր-աւուածաբանները շատ յաճախ վիճում են փիլիսոփայական հողի վրայ, և ոչ թէ միայն երովհետև ըստ Ղուկասու այսպէս է կամ այնպէս է: և այնչէ Զարմանալի չէ, ուրեմն, եթէ գտնւում են մարդիկ, որոնց մէջ խոր արմատացած կրօնական զգացմունքները համբերաշիւ ապրում են իրենց մտքի բարձր ուսման և զարգացման հետ: Այս կէտը հարկարոր է ի նկատի ունենալ, որպէս զի չկարծւի, որ եթէ եւրոպական մտքով զարգացած մի մարդ ի սրտէ նւիրւում է այնպիսի մի գործի, ինչպիսին է՝ աւետարանը բացատրել անուսում և ծէսերի մէջ խեղ-շւած մի ժողովրդի, պէտք է անպատճառ այդ ձգտումների շինակի տակ ուրիշ ստորառաներ որոնել, լինի այդ քաղաքական կամ եսամոլ-կշիրական:

Ամեն թիւրիմացութիւնից խոյս տալու համար, խօսենք միայն Հիլիսոբունդի վրայ: Բացի մարդասիրական նպատակներից, Հիլիսոբունդը, ասացինք, ունի և կրօնական շահեր, բացատրելով, որ «շահերի» փոխարէն աւելի ճիշդ կ'լինէր ասել «ձգտումներ»: Մենք ցոյց տւինք, թէ ինչու մէկ է կայանում զանազանութիւնը Հիլիսոբունդի կրօնական ձգտումների և կաթոլիկ շահերի միջև, և ասա-

⁴ Այս երևութիւնը վիշում ենք լով որպէս Փաքտ, ոչ թէ իբրև մի պակասութիւն:

ցինք, որ այդ զանազանութիւնը ազդում է և քարոզի ձևերի վրայ: Յաջանի է, որ լուսաւորչականը, կաթոլիկ, շառնալով չի կարող կաթոլիկ շառնալ փոքր առ փոքր, այլ, ընդունելով կաթոլիկութիւնը, միևնոյն ժամանակ ընդ միշտ կտրում է իւր շարաքերութիւնները լուսաւորչական եկեղեցու հետ. կարելի է ասել և աւելին, որ նա կիսով չափ կտրում է իւր նախկին շարաքերութիւնները և ազգային շահերի և ցաւերի հետ, որովհետև այնուհետև նորա համար առաջին տեղը արդէն բռնում է պապը, և յետոյ ազգը: Կաթոլիկ միսիոնարների գործունէութիւնը Արևելքում կայանում է նորանում, որ մի կողմից նոքա խլլում են որ և է եկեղեցուն պարկանոյ մի անձ, կաթոլիկ շարձնելով նորան, և միւս կողմից ամեն միջոցներով աշխարհում են տկարացնել այդ եկեղեցին: Հիլիքսբունդի բողոքական գործիչները իրենց աւելարանական քարոզութեան մէջ չեն ձգտում խլլել հայերին իրենց մայր-եկեղեցուց, այլ, ինչպէս նոքա հաւատացնում են մեր առաջ բերած գրութիւնների մէջ, ընդհակառակը, ուժեղացնել այդ եկեղեցին, որպէս զի նա աւելի յաջողակ կերպով կարողանայ մրցել ուրիշ հարևան եկեղեցիների հետ մի կողմից, և միւս կողմից—առաջն առնէ հայերի մէջ ծաւալուող անհաւարութեան: Այդ երկու նպատակին կարելի է հասնել միայն լուսաւորչական եկեղեցու աստիճանաբար վերանորոգման ճանապարհով: Լուսաւորչական եկեղեցին չի ընթացիլ զուգընթացաբար մարդկային կեանքի անընդհապ գարգացման հետ: Նա խրեւել է ծէսերի մէջ. ձևականութիւնը խեղդում է հաւատը. անհրաժեշտ է մաքուր կրօնի ճառագայթները շարձնել նորա վրայ, որպէս զի նրա մէջ արթնանայ ըստ Աւետարանի իսկական հաւատի պահանջը, որպէս զի հաւատը զիտակցական շառնաց, և այլն: Այդպէս են մտածում Հիլիքսբունդի գործիչները: Բայց ասում են նոքա, ինչպէս անել, որ վերջը ծառայած լինելու փոխարէն՝ Դուրս չգալ որ գործեցին ի վնաս հայոց ազգի: Ինչպիսի առնելով այն նշանակութիւնը, որը հայոց եկեղեցին ունի հայերի համար, պիտի խուսափեն ամեն մի հանգամանքից, որը կարող կ'լինի թուլացնել այդ եկեղեցին: Բողոքական շարձնելով որևէ լուսաւորչականի և ուրիշներին այդպիսով հաւատափոխութեան օրինակ տալով, կ'ընշանակէ զիտակցաբար նպաստել այդ վրանգին: Ի՞նչ անել: Այս հարցի

վրայ, որը չաճախ Դրական կերպով Դրած է եղև, զանազան պատասխաններ չառաջ եկան. սոցա բոլորի ընդհանուր գաղափարը սա է. հարկատու է վերամտորոգել հայոց եկեղեցին, ոչ թէ արտաքին այլ ներքին մասնապարհով. այսինքն այնպես դատարարակել հայ երեսնամյակի (ներկայումս — որքերին), որպես զի նորա մեծ սնալով նկատեն իրենց մայր եկեղեցու պակասութիւնները եւ աշխատեն հետաքննել նոցա. գործելով այդ հարցում անտարանակամութեան ուղղութեամբ:

Արեմն Հիլֆսբուհը ցանկանում է, որ հայոց եկեղեցին վերանորոգի հայերի միջոցով, և ոչ թէ քանդի օտարների ձեռքով: Այժմ տեսնում է ընթացողը, որ այն հակասութիւնները, որ ամեն մի քայլափոխում պատահում էինք մեսսիոնարների նամակներէ մէջ (տես Վուրճի նախորդ համարները), իսկապէս հակասութիւններ չեն և գեղեցիկ կերպով ներդաշնակում են: Մի կողմից Հիլֆսբուհը աշխատակիցները կը բն տալիս իրենց կրօնական քարոզի ծարախն, միւս կողմից աշխատում են շարմարացնել իրենց գործունէութիւնը հայերի շահերին. և ըողոքական միսսիոնարներից բղխած այս նախադասութիւնը թէ մենք զգում ենք Դէպի լուսաւորչական եկեղեցին ջերմ սիր և ցանկանում ենք նորան ամենաբարձրը զարգացումս — այդ խօսքը կեղծաւորութիւն է:

Հիլֆսբուհը ծրագիրը սքանչելի է և մեզ մնում է հաւատարմ որ նա անարար կերպով գործադրում է այդ ծրագիրը. մեզ մնում է նոյնպէս յուսալ որ Հիլֆսբուհը ապագայում, կրք նորան կը միանան նոր մարդիկ և կը հեռանան հինները, մի անգամ ընդունւած ազնիւ սկզբունքը կը մնայ անփոփոխ: Կարծում եմ որ աւելորդ է բերել այստեղ այն խօսքերը, որ պ. Երնսպ Լոհմանը, հարաւային կոմիտէների նախագահը, գրել է մեզ. որպէս պատասխան բողոքական քարոզի հարցին:

Վարդը եմ ձեզ հաւատացնել, որ մենք բոլորովին հեռու ենք հայկական եկեղեցու մէջ բողոքականութիւն քարոզելու մտքից: Երբ ևս հեռանում էի Հալապուսից ⁶, մի ծեր հայ քահանայ, որի հետ

⁶ Յունար 18, 1900. Հեղինակը տեւ է մեզ առաջ բերած տողերի հրատարակութեան թուղարութիւնը:

Անցեալ տարի հեղինակը ճանապարհորդել է Տաճկա-Հալապուսում:

միասին գործած եմ տառապեալների համար, ասաց ինձ. «Ուշարկեցէք մեզ Աւետարանի քարոզիչներ, որպէս զի նոքա տարածեն (verkünden—հռչակեն) Աւետարանը հայոց եկեղեցու մէջ (նորրը բնագրումն է)»: Եթէ հայկական եկեղեցին ցանկանում է ուժեղ լինել, նա պիտի ներշնչւի ոգեկան ոյժերով: Որեւէ մեռած եկեղեցի, որը հեղուկ է միայն արտաքին ձևերի — ոյժ չ'ունէ:... Ես չեմ սպասում, որ մեր որբանոցներում շաստիարակող երեխաները անցնեն բողոքական եկեղեցին: Բայց ես խնդրում եմ Աստուծուց, որ որ նա շինէ նոցանից մաքուր և իսկական քրիստոնեաներ, որոնք հանդիսանան որպէս լոյս և աղ իրենց ժողովրդի և եկեղեցու մէջ: Ուրեմն թոյլ տուէք մեզ միասին գործել յօգուտ ձեր խեղճ ազգի»⁷:

Այսբանը՝ շաւանափոխութեան մասին: Ինչ վերաբերում է հայերի ղերմանացմանը, օրինակ, ի նպաստ քաղաքական շահերի, Հիլֆսբուռնդը հիմնելու օրից սկզբունքով որոշել էր — ոչ մի քաղաքական գոյն չորալ բօզնութեան միութեան: Բացի այդ, չեմ պատահած, որ հայ որբերին գերմանացնելու հարցը որ և է տեղ շոշափուած լինի, այնպէս որ յժար ընդունելի է որ այդպիսի ձգտում գոյութիւն ունենայ, մանաւանդ որ «Թզնութեան միութեան» աշխարակիցները ամեն քայլափոխում կրկնում են, որ նոցա նպատակն է, կրթել հայ զաւակները, «ինչպէս հայեր»: Այդ տեսակէտից, որբերի մեծագոյն մասի համար կարելի է հանգիստ լինել, որովհետեւ սոցա միայն սկզբնական ուսում տալով և սովորցնելով մի որ և է արեւտոյհէնց որ երեխաները հասնում են այն հասակին, երբ կարող են փոշ աշխատել և հոգալ սեփական ապրուստը, Հիլֆսբուռնդը աշխատում է անմիջապէս արձակել նոցա որ-

⁷ Մի քանի ամիս սորանից առաջ կապացաւ Բերլինում Հիլֆսբուռնդի ընդհանուր ժողովը: Յիշեալ Գր. Ռորբախը շեշտում էր որբանոցների քաղաքական նշանակութեան վրայ, ցանկանալով հրեի աւելի շահագրգռել ունկնդիրներին, որպէս զի նոքա աւելի աջակցեն այդ գործին: Գր. Լեպսիուսը իւր ճառի մէջ, ասում են, Նկատեց, որ «հայերին օգնելու միութիւնը» քիչ է ներառքըրում այն հարցով՝ օգուտ թէ վեաս է բերում նա Գերմանիայի պետական շահերին. նա կարարում է միայն իւր քրիստոնէական պարտականութիւնը:

քանոցներէց և շրկել գիւշերը. այնպէս որ ինչ ոգով էլ շաստաիրակած լինեն երեխաները որբանոցներում, ընդ միշտ վերաշառնալով «գիւշերը՝ նոքա նորից պիտի հայեր շառնան և մնան: Մի փոքր վրանդ սպառնում է այն երեխաներին, որոնք նկատուում են որպէս արժանի քրոջը: ուսման: Օտարացումը յաջողում է շարոցներում, յերբ նոցա շաստուութիւնը հիմնուում օտար դրականութեան վրայ և փեռում է երկար փարիններ: Եթէ Հիլֆսբունդը չհոգաց հայկական առարկաների շաստուութեան մասին յիշեալ փոքրամասնութեան համար, ու չի գտնի արժանի հայ ուսուցիչներ, որոնք կարողանային զուգընթացութիւն սահպանել գերմանական շաստուութեան հետ, այն ժամանակ Հիլֆսբունդը անգիտակցօրոն փոքր իշարէ կ'օտարացնէ որբերին, մտնելով նրանց թարմ յիշողութեան մէջ գերմանական փառաբանութիւններ: Բնական է, որ մեզ համար միևնոյնը չի կարող լինել, թէ արդեօք մի քանի հարիւր երեխաներ, փոքր ի շարէ հիմնական ուսում և շաստարակութիւն ստանալուց յետոյ, մտնելով կեանքի մէջ, օտար կ'ըլինեն իրենց ազգութեան, թէ ոչ: Գոցա թէ կորուստը, և թէ սահուստը չի կարող զգալի չը լինել մեր հասարակութեան համար:

Սկզբից մենք նկատեցինք, որ ժամանակի ընթացքում Հիլֆսբունդի ձգտումներին միացան և քաղաքական ոչ թէ շահեր աջլ արդարացում: Այո, «Օգնութեան Միութեան» կողմից ոչ մի ժամանակ առաջ չէ եղել, որ իւր արեւելեան հիմնարկութիւններով նա կը ձգտի նպատել Գերմանիայի կառավարութեան քաղաքական շահերին: Ինչպէս յիշեցինք սկզբունքով քաղաքական նպատակները արտաքսւած են «Օգնութեան Միութեան» ծրագրից: Քաղաքական արդարացումի մասին խօսք եղել է պոլեմիկայի ժամանակ «Մուրճ»-ի անցեալ համարներում յիշած չարձակումների ժամանակ, Հիլֆսբունդի անդամների կողմից արտաջայտուած է եղած, որ Հիլֆսբունդը ոչ միայն ոչ մի վնաս չէ բերում գերմանական քաղաքականութեանը Տաճկաստանում, այլ ուղղակի մեծ օգուտ. և, որքան մեզ յայտնի է, միայն շոքոտոր Ռորբախն է եղել (նա Հիլֆսբունդի գործող մարմինն չէ պատկանում), որը շրական կերպով զբաղւել է այն հարցով, թէ ինչ ծառայութիւն կարող են մատուցանել գերմանական որբանոցները Գերմանիայի արեւելեան

քաղաքականութեան: Նորա կարծիքները Մուրճի անցեալ համարում արդէն առաջ բերինք⁸:

Այժմ, վերջին եզրակացութեան համար հարցնենք, թէ ինչ նշանակութիւն կարող են ունենալ մեզ համար գերմանական Հիլֆսբուենդը և նորա հիմնարկութիւնները: Պարասխանելով գորանցոց կրօնք այն մինիմալ օգուտը, որ նա տւել է և կարող է տալ մեզ, եթէ մինչև անգամ նորա ներկայիս գործունէութիւնը այնպէս անմեղ չլինի, ինչպէս իրանք նկարագրում են, որին և հաւատում ենք մենք և կամ եթէ նա ապագայում շեղի իւր սկզբունքներից: Եւ նա շատ նպաստել է հայոց անւան ժողովրդականացմանը Գերմանիայում և միշտ պաշտպանել է և կ'պաշտպանի հայերին, երբ սոցա վրայ յարձակմունքներ են լինում մամուլի մէջ:

Բ. Նորա շնորհիւ հազարաւոր հայեր ազատուել են սովի մահից և մօր 2.000 երեխաներ ապաստան են գտել:

Գ. Ինչ ոգով և շաստիարակած լինեն այդ հայ օրբիկները քաքար է, որ 2.000 երեխայ փոքր ի շարէ կանոնաւոր ուսում ու շաստիարակութիւն են ստանում և սովորում որոշ արհեստներ և այդ այն ժամանակ, երբ կոտորածների առթիւ հայկական ուսումնարանները փակեցան Տաճկաստանում:

Դ. Հիլֆսբուենդի հիմնարկութիւնները իրենց գոյութեամբ շարացնում են Եւրոպայի զործակալների թիւը Տաճկաստանում: Ամերիկական, գերմանական, ֆրանսիական և այլ միասիաները հանդիսանում են Թիւրքիայում ինչպէս Եւրոպայի, այսպէս առած, ոչ պաշտօնական հիւպատոսներ. նոքա հանդիսանում են, որպէս ոչ պաշտօնական հսկողներ սրածկական կեանքի, գլխաւորապէս դաւառանքների, կոտորածների և ուրիշ Դէպքերի միջոցին նոքա հաշորդում:

⁸ Թող եւ տալիս ինձ, որպէս օրինակ, փշտակել հետեւեալ Դէպքը: Անցեալ տարի, ինձ ծանօթ մի գերմանացի, կարդալով նամակս Հիլֆսբուենդի օրգանի մ'ջ, գրեց ինձ մի բաց նամակ այն քաղաքի հասցէով, որը նշանակուած էր որպէս նամակիս վերջում: Նա գրում էր, որ պահելով իւր հաշուով մի հայ որբ Հիլֆսբուենդի որբանոցի մէջ, նա շատ կ'ցանկանար տեսնուել մի որ և է հալի հետ՝ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար իւր «զաւակի» երկրի մասին, և որ այդ նպատակով նա մտադիր է այս ինչ օրը դալ այդ քաղաքը և տեսնուել ինձ հետ:

են պատահածը Եւրոպային և մամուլը սկսում է խօսել: Մինչև այժմ միայն գերմանական մամուլն էր, որ լռում էր այդ շէպքերում, այժմ բոլորովին ուրիշ է, և մի Լեպսիուսի, Լոհմանի, Բրոկեսի հաղորդագրութիւնները բարձր են զնահապում գերմանական մամուլի մէջ:

Ե. Ինչպէս սկզբում ցոյց էինք տուել, Հայ որբիկները ունին գերմանական ինամակալներ՝ «ծնողներ»: Այդ ծնողները լինում են ինչպէս առանձին անհատներ, անձնաւորութիւնների մի խումբ, նաև մի եկեղեցի կամ ընկերութիւն: Պահելով իրանց հաշուով հայ երեխաներ, լինելով յաճախ նոցա հետ նամակագրութեան մէջ, այդ «ծնողները» բնականաբար փոքր ի շարէ կապում են իրենց զգալիներին՝ հետ և պիտի հետաքրքրեն նոցա վիճակով, նոցա երկրի շրջութիւնով, կեանքով և այլն: Ուրեմն Հիլֆսբուրնի շնորհիւ Գերմանիայի հասարակութեան մէջ կան հազարներ, որոնց ուշադրութիւնը գրաւում են արևելքի շէպքերը և որոնք բարոյական տեսակէտից անտարբեր չեն կարող մնալ շէպի կտորածները և ուրիշ տխուր անցքերը:

Զ. Շնորհիւ Հիլֆսբուրնի շարոցներին և բողոքականութեան մեր եկեղեցին և ուսումնարանները, նոցա հետ մրցելու համար, ըստիպւած կ'լինին վերանորոգել և լաւանալ. այդ ապացուցին ամերիկական հիմնարկութիւնները:

Է. Վերջապէս, Հիլֆսբուրնի շնորհիւ նոր արգելք է ստեղծուած կաթոլիկութեան տարածմանը Հայաստանում: Այն ծառայութիւնը միայն որ կատարել են արդէն ամերիկացիք, արժանի է արդէն որ յաջողութիւն ցանկանանք Հիլֆսբուրնին:

Նայր անգամ լսում է, որ հայերին օգնելու «Գերմանական Օգնութեան միութիւնը» արժանի չէ մեր շնորհակալութեան հէնց այն պարճառով, որ նորա գործունէութիւնը օգտակար է նաև գերմանական շահերին (?):

Կրկնում ենք, Հիլֆսբուրնը երևան է եկել, ինչպէս հետևանք մաքուր մարդասիրական ձգտումի—ազատել բարոյական և ֆիզիկական վախճանից՝ կոտորածներից յետոյ մնացած որբերին: Այդ ձրգ-

տուժով ներշնչած է և նորա ներկայ գործունէութիւնը: Անյերբելի թէև, որ է նորա գործիչներինց ոմանք ոգևորում են նաև կրօնական քարոզով, այն մտքով, ինչպէս ցոյց տւինք, իսկ ոմանք մեծ բուականութիւն են ստանում, որ իրենց մարդասիրական գործը նպաստում է և Գերմանիայի պետական շահերին Արևելքում: Եթէ իրօք Հիլֆբրունդի հիմնարկութիւնները ծառայութիւն կը մատուցանեն Գերմանիայի շահերին, շորանից շեռ չի բլլում, որ այդ ծառայութիւնը մեզ պիտի փաստ լինի. և մենք փեսանք, որ այդ ճանապարհի վրայ Հիլֆբրունդը անկարող է գրեթէ մեզ փաստ բերել: Ուրեմն, եթէ նա վերջ ի վերջոյ օգտաւէտ հանդիսանայ թէ գերմանացիներին, և թէ հայերին, այն ժամանակ ոչ միայն երկու կողմը պիտի շնորհակալ լինին, այլ և ամեն մի կողմնակի հանդիսաբես պիտի ուրախ լինի, որ բարի գործը օգտաւէտ է լինում: Ինչպէս սրացողին, այնպէս և անողին: Գորանումն է կայանում կենսական առողջ իշէալը:

Այս քաղաքը մտաւորական կեանքով շատ քիչ է հարուստ: Այնտեղ կան միայն մի քանի մտաւորականներ, որոնք կարող են իրենց անհատական կեանքով և գործունէութեամբ օգտակար լինել իրենց հայրենիքին: Այնտեղ կան միայն մի քանի մտաւորականներ, որոնք կարող են իրենց անհատական կեանքով և գործունէութեամբ օգտակար լինել իրենց հայրենիքին: Այնտեղ կան միայն մի քանի մտաւորականներ, որոնք կարող են իրենց անհատական կեանքով և գործունէութեամբ օգտակար լինել իրենց հայրենիքին:

Այս քաղաքը մտաւորական կեանքով շատ քիչ է հարուստ: Այնտեղ կան միայն մի քանի մտաւորականներ, որոնք կարող են իրենց անհատական կեանքով և գործունէութեամբ օգտակար լինել իրենց հայրենիքին: Այնտեղ կան միայն մի քանի մտաւորականներ, որոնք կարող են իրենց անհատական կեանքով և գործունէութեամբ օգտակար լինել իրենց հայրենիքին: Այնտեղ կան միայն մի քանի մտաւորականներ, որոնք կարող են իրենց անհատական կեանքով և գործունէութեամբ օգտակար լինել իրենց հայրենիքին: